ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքում ուղղագրական սխալ *չկա:***

1) վառոդ, առնչվել, բարյացակամ, հարսնացույի
2) պայուսակ, թպրտալ, անհարկի, կիսափուտ
3) արծնապակի, խառնիճաղանջ, ընդդարմանալ, մտացածին
4) դափնեվարդ, սեթեվեթել, ալեվարս, արևառ

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են դասավորված այբբենական կարգով:**

1) գայլորս, գազանային, գառնադեմ, գաճաճ
2) բնական, բնաձայնական, բնատուր, բլթակ
3) արծաթազօծ, արծաթել, արճճե, արմավենի
4) եռաթև, եռաժանի, երախտիք, եղջերու

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերի և բառաձևերի վերջին վանկն է շեշտվում:**

1) ճախրել, անտառը, եղնիկ, հրճվանք
2) գրեթե, աշակերտից, տանուտեր, բարևներ
3) այգեբաց, երփներանգ, բոսորագույն, օրագիր
4) բարեկամ, պանծանք, պատմիչ, սակր

4 **Ո՞ր բառում է գաղտնավանկի *ը*-ն սխալ տեղադրված:**

1) շր(ը)խկոց
2) ճխ(ը)լվել
3) մթ(ը)նկա
4) ձեռն(ը)տու

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) կաթոգին, հարգալից, գորովալից, սիրալիր
2) մանրավաճառ, առևտրական, փերեզակ, չարչի
3) շավիղ, կածան, արահետ, բացատ
4) նենգ, խաբեբա, խարդախ, գծուծ

6 **Ո՞ր բառում *-իք* ածանց *չկա:***

1) չարիք
2) տանիք
3) կարծիք
4) աղիք

7 **Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:**

1) մոլորակածիր – ***մոլորակ, ծիր***՝ արմատներ, ***ա*** ՝հոդակապ
2) համատրամաչափ – ***չափ*** ՝արմատ, ***համ(ա), տրամ***՝ նախածանցներ, ***ա*** ՝ հոդակապ
3) նամակադրոշմ – ***նամակ, դրոշմ***՝ արմատներ, ***ա*** ՝ հոդակապ
4) ներգոյական – ***գո*** ՝արմատ, ***ներ, ական*** ՝ածանցներ

8 **Ընդգծվածներից ո՞րն է մյուս երեքին համանուն:**

1) **Ստեր** տարածելով է մրցակիցներին իր ուղուց հեռացրել:
2) Դու շատ լավ գիտես՝ **ստեր** չեմ հանդուրժի:
3) Եթե նա այս անգամ էլ **ստեր**, հայրն արդեն չէր ների:
4) Քեզնից **ստեր** շատ եմ լսել և եթե անկեղծ լինեմ, հոգնել եմ:

9 **Ո՞ր նախադասության մեջ ենթակայական դերբայ կա:**

1) Գետը վարարել էր ու իր հորձանքի մեջ առած ջրլող թռչունների երամը՝ շառաչյունով հոսում էր:
2) Վանքի բակից նա արագ դուրս եկավ մղձավանջից խուսափող մարդու նման:
3) Ալխոն ճանապարհից դուրս ընկավ, հնձած արտերում դեսուդեն նետվեց. ազատում չկար. կարմիր բիծը ցատկոտում էր նրա դնչի տակ:
4) Բարձրախոսների մոտով մի աղջիկ էր անցնում քաղաքային սահուն քայլերով, երեխաների ու ձիու լռիկ ստվերներն օրորվում էին կաթնալույսի մեջ:

10 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված ըղձական եղանակով:**

1) բերեմ, ունեմ, հարցնեմ, ասեմ
2) չգայի, ընդունվի, հարգեր, լսվեին
3) չբերեմ, չեմ բերի, չգրեիր, խոսեմ
4) չուզեր, չուզեց, կարդայինք, մոտենային

11 **Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:**

1) Մահն իսկ չի կարող բաժանել մեզ:
2) Որքան մոտենում ես, լեռն այնքան հեռանում է:
3) Մեր երկրին հենց այդպիսի մտավորականներ են անհրաժեշտ:
4) Օրերը ցրտել են, իսկ Արարատյան դաշտում դեռ բերքահավաք է:

12	**Ո՞ր նախադասության մեջ թվական կա:**

1) Քսանամյա արքայազնը նստեց բազմոցին, և կրկին ջերմ արտասուքը սկսեց հեղեղի նման թափվել նրա աչքերից:
2) Ոչ հեռավոր անցյալում՝ քառորդ դար առաջ, այստեղ հարթ ու հողածածկ տանիք չուներ միայն հինավուրց գմբեթարդ եկեղեցին:
3) Նրան պատասխանեց կոչնակի ձայնը, որ քանի՜ անգամ լսելի եղավ եկեղեցու բարձրությունից ու հիշեցրեց ճաշի ժամը:
4) Տասնյակ ձիավորներից առանձնացավ դրոշակակիրը, որը հանեց գոտուց քարշ ընկած շեփորը և հնչեցրեց:

13	**Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:**

1) ավելորդ, վճռորոշ, խավարամած, հմայիչ
2) հոտավետ, համեստ, լայն, հերոսաբար
3) բաղձալի, ամենևին, վայելուչ, մկանուտ
4) առաջնային, այսպիսի, բարձրորակ, մշտապես

14	**Ո՞ր տարբերակում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված:**

1) Տեղ-տեղ հաղորդակցությունը կտրում էին մթին, անթափանց անտառները: *(գոյական)*
2) Այցելողը կարող է տեսնել մարդկության վաղնջական ժամանակների՝ առեղծվածներով լի կյանքի պատկերը: *(դերբայ)*
3) Նրա մոտ նստածը մանկահասակ, նազելի, սիրունատես երիտասարդ մի կին էր: *(ածական)*
4) Դրանք իրարից բոլորովին անջատված հայկական գավառներն էին: *(դերանուն)*

15	**Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Այս գեղգեղանքը սիրավառ սրտի մի ամբողջ հեքիաթ էր մի դյութական հեքիաթ ծաղիկների բույրով ներդաշնակված:
2) Մի աղջիկ իր ընկերուհիների հետ անցավ իբրև մի թարմագեղ գարուն:
3) Ծերունի մի դերվիշ ճակատն արևառ եկավ որ սֆինքսից հարցումներ անի:
4) Գնա և պատգամիր հանուր աշխարհին հարավին հյուսիսին արևելքին արևմուտքին երջանկության իմաստը:

16	**Նախադասության ի՞նչ անդամ է դերբայական դարձվածը:**

Շիրվանզադեի բնավորության բացասական գծերից մեկը ուրիշ գրողների արժանիքները ճանաչելն էր:

1) ենթակա
2) ստորոգելի
3) պատճառի պարագա
4) որոշիչ

17 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Հին կամուրջի գերանները դողում են շյուղի նման, գետը ծանր քարեր է շպրտում կամարի հիմքերին, թվում է՝ զայրանում է, որ կամուրջն իր հոսանքը բաժանում է ճյուղերի:



18 **Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Աննան ասաց հորը, որ ինքը գիտի, որ նա լավ մարդ է, և իրեն համոզել պետք չէ:

1) -Ես գիտեմ և համոզված եմ, որ դու լավ մարդ ես,-ասաց Աննան հորը:
2) -Ես գիտեմ՝ նա լավ մարդ է, և ինձ մի՛ համոզիր,-ասաց Աննան հորը:
3) -Ես գիտեմ, որ դու լավ մարդ ես, և նրան համոզել պետք չի,-ասաց Աննան հորը:
4) -Ես գիտեմ, որ դու լավ մարդ ես, և ինձ համոզել պետք չէ,-ասաց Աննան հորը:

19 **Ո՞ր տարբերակում է ընդգծվածը նախադասության անդամ:**

1) Աշխարհին, **այո՛,** մաքրություն է պետք:
2) Հեշտ է, **գուցե,** գրքեր գրե՞լ, ո՛չ թե կարդալ…
3) Արքաների հետ խոսում են **«դու»-ով,**
   Եթե, իհարկե, լսում են նրանց:
4) Հաշվեցե՞ք, **խնդրե՞մ,** հաշվեցե՞ք նաև,
   Թե մեզնից գոնե՛ մեկը իր կյանքում
   Քանի՞ կնոջ է տենչանքով նայել…

20 **Ո՞ր նախադասության մեջ ստորակետ *չպիտի* դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Եթե արևը չխոնարհվեր դեպի մայրամուտ նա առանց հոգնության երկար կմնար այդ դիրքով և չէր հագենա մրգերը քաղած և արդեն դեղնող ծառերի սոսափից:
2) Վրանները հավաքելուց և հեռանալուց հետո Մարգարը երկու միտք ուներ Թորոսիկին պահել և ծիրանի կորիզները պահ տալ մի ապահով հողում:
3) Հանկարծ ծոցից հանելով տետրը սպիտակ թղթի վրա մատիտի արագ շարժումով նկարեց կնոջը օջախի մոտ նստած աչքերը օջախի քարին:
4) Նրան թվաց ֆետրե գլխարկով մարդու սպիտակ թղթերը արտացոլում են ամեն ինչ ինչպես աղբյուրի վճիտ ջուրը:

21 **Ո՞ր նախադասությունն է արևելահայերենով:**

1) Ի՞նչ ընելու է ուրեմն, թո՞ղ տալու է, որ բարի մարդերն առանց հիշատակի անցնին երթան:
2) Թերևս հարցնողներ գտնվին, թե այս մարդն եթե այսչափ գործունյա է, հիմա ինչո՞ւ չգործեր:
3) Մենք մեր ընթերցողաց փափագն հագեցնելու համար արժան դատեցինք այս օրվա թերթերնուս մեջ օտար լրագիրներեն քաղվածք մը ընելով հրատարակել:
4) Հեռվից մշուշի մեջ Մասիսն ինձ երևաց. իբր ժպտում էր հայրաբար, կանչում էր տուն:

22 **Տրված հատվածը Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է:**

Անմահական ջրրով լիքըն օսկե փրնջան իս ինձ ամա.
Նըստիմ, վրրես շրվաք անիս՝ զարբաք վրրան իս ինձ ամա.
Սուչս իմացի՛, է՛ նենց սպանե՝ սուլթան ու խան իս ինձ ամա:

1) «Աշխարումս ա՛խ չիմ քաշի»
2) «Դուն է՛ն գըլխեն իմաստուն իս»
3) «Աշխարս մե փանջարա է»
4) «Թամամ աշխար պըտուտ էկա»

23 **Հատվածներից ո՞րը Պ. Դուրյանի որ բանաստեղծությունից է:**

ա. Բույլ մը նայվածք, փունջ մը ժպիտ,
Քուրա մը խոսք դյութեց իմ սիրտ:
բ. Ո՞հ, կա՛յծ տըվեք ինձ, կա՛յծ տըվեք՝ ապրի՞մ…
Ի՞նչ, երազե վերջ գրկել ցուրտ շիրի՞մ…
գ. Հոդ աստղերը չեն մեռնիր,
Ծաղիկները հոդ չեն թոռմիր…
դ. Սուրբ տենչերով լոկ ծարաված՝
Ցամաք գտնել աղբերքն համայր…

1. «Իմ ցավը»
2. «Տրտունջք»
3. «Լճակ»
4. «Սիրել»

1) ա-4, բ-1, գ-3, դ-2
2) ա-2, բ-3, գ-4, դ-1
3) ա-4, բ-2, գ-3, դ-1
4) ա-1, բ-2, գ-3, դ-4

24 **Պնդումներից ո՞րն է սխալ Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի վերաբերյալ:**

1) Վեպի գլուխներից մեկում Ռաֆֆին պատկերում է Անհուշ բերդում կալանված հայոց արքայի ողբերգական ինքնասպանությունը:
2) Վեպում Մերուժանի վախճանը ներկայացված չէ:
3) Վեպը ունի առաջաբան, որտեղ հեղինակը շարադրում է պատմավեպ գրելու իր սկզբունքները:
4) Վեպի «Փակագծերի մեջ» հատվածը թեև անմիջաբար չի առնչվում վիպական գործողություններին, սակայն դարաշրջանի խոր վերլուծությամբ կարևոր դեր է կատարում վեպի բովանդակությունը հասկանալու համար:

25 **Հեղինակային ի՞նչ նշում կա Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի վերնագրի տակ:**

1) «Մի կորած մարդու հիշատակարանից»
2) «Հուսահատված մարդու հիշատակարանից»
3) «Իրավաբանի հիշատակարանից»
4) «Կյանքի հատակն ընկած մարդու հիշատակարանից»

26 **Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի նախերգանքի երկտողերի ո՞ր հերթականությունն է ճիշտ արտահայտում այդ երկտողերի հաջորդականությունը:**

1. Մենք ամենքս հյուր ենք կյանքում
   Մեր ծնընդյան փուչ օրից
2. Մահը մերն է, մենք մահինը,
   Մարդու գործն է միշտ անմահ
3. Անց են կենում սեր ու խընդում,
   Գեղեցկություն, գանձ ու գահ
4. Հերթով գալիս, անց ենք կենում
   Էս անցավոր աշխարհից

1) 4, 1, 2, 3
2) 2, 4, 1, 3
3) 1, 3, 2, 4
4) 1, 4, 3, 2

27 **Ա. Բակունցի ո՞ր պատմվածքից է հետևյալ հատվածը.**

«Ավին երրորդ անգամ կրակեց, բերդանի գնդակը խրվեց ձյունի մեջ, վզգաց, ինչպես շիկացած խոփը դարբնոցի ջրաքարում: Երրորդ կրակոցը նրա բերդանի վերջին ճիչն էր: Ավին մինչև վերջ էլ չիմացավ, թե ինչու չորրորդ փամփուշտը բերդանը ներս չառավ:

Արջը ոռնոցով մի ոստյուն էլ արեց: Ավին շատ մոտ զգաց վիրավոր գազանի տաք շունչը…»:

1) «Սիրհավ»
2) «Սպիտակ ձին»
3) «Խոնարհ աղջիկը»
4) «Մթնաձոր»

28 **Պ. Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Ով սահմանում է նոր օրենք ու կարգ՝
Հայտարարվում է և օրենքից դուրս:
Բայց չե՞ն վախենում նրանք չար մահից.
Ապրում են դժվար ու մեռնում են հեշտ...

1) «Վարք մեծաց»
2) «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»
3) «Մարդ էլ կա, մարդ էլ»
4) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին»

29 **Ո՞ր խոսքը Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի որ հերոսինն է:**

1. «…Բայց այս տեսակ աղջիկները գործ չեն տեսներ տունը. առտվընե մինչև իրիկուն ծունկ ծունկի վրա կը դնեն և կերգեն, կը պարեն և կամ բոլոր օրը կը պտտին. հիմակվընե ըսեմ, վերջեն ինձի պատճառ չբըռնես… անանկներ ալ կան, որ իրենց ուզած մեկը կը սիրեն և շատ անգամ անոր հետ գեղ մը կը փախչին…»:
2. «…Անոնք, որ գիրքով կզբաղին, թշվառությամբ կզբաղին: Հառաջադիմություն կը պոռանք և ետ ետ կերթանք, լույս կը պոռանք և դեպի խավար կերթանք, …ապագա կըսենք և դեպի անցյալ կը վազենք»:
3. «… անոնք անցյալ են, մենք՝ ապառնի, անոնք խավար են, մենք լույս…անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են, մենք՝ բանջարեղեն…»:
4. «Միտքդ ի՞նչ է, եղբա՛յրս, ես քեզի բան մը չըրի, ինչ կուզես ինձմե, գնա քեզի բարկացնողին զրուցե այդ խոսքերը…»:

ա. Աբիսողոմ աղա
բ. բանաստեղծ
գ. վարժապետ
դ. Շուշան

1) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
2) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
3) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
4) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ

30 **Գ. Զոհրապի «Զաբուղոն» նորավեպում Զաբուղոնը, տեսնելով իր սիրած աղջկան ուրիշ երիտասարդի հետ, չի սպանում վերջինիս, որովհետև՝**

1) զգում է, որ այդպիսով չի կարող վերադարձնել իր սիրած աղջկան:
2) ափսոսում է իր՝ դժվարությամբ ձեռք բերված ազատությունը:
3) խղճում է Վասիլիկին:
4) նրան արժանի չի համարում իր վրեժին:

31 **Ո՞ր պնդումը Ե. Չարենցի «Դանթեական առասպել» պոեմի վերաբերյալ ճիշտ *չէ:***

1) Պոեմում բանաստեղծը նկարագրում է պատերազմի հետքերը Կարսից մինչև Վան ընկած ճանապարհին:
2) Պոեմի կենտրոնական դեմքը ինքը՝ զինվոր բանաստեղծն է:
3) Պոեմը սկսվում է պատերազմ մեկնող երիտասարդ կամավորների ուրախ տրամադրությամբ:
4) Պոեմում կռվի որևէ դրվագ անմիջականորեն չի ներկայացվում:

32 **Ո՞ր շարքի ստեղծագործություններից ոչ մեկի հեղինակը Հ. Մաթևոսյանը *չէ:***

1) «Ավելորդը», «Հայոց վիշտը», «Տոհմի կանչը»
2) «Համբերանքի չիբուխը», «Աշնան արև», «Հայրենի հողը»
3) «Արևին», «Նամուս», «Կանաչ դաշտը»
4) «Նարինջ զամբիկը», «Քարափը», «Հայ ժողովրդի երգը»

33 **Տրված հատվածում քանի՞ որոշիչ կա:**

Թութանհամոնը գինու սիրահար է եղել. այսպիսի եզրահանգման են եկել փարավոնին ուսումնասիրած գիտնականները՝ հաշվի առնելով և այն հանգամանքը, որ Եգիպտոսում գինին համարվել է բացառիկ ըմպելիք: Գտնված շշերի վրա եղել են մանրակրկիտ տեղեկություններ հարուստ բերքի մասին և խաղողագործի անունը:

34 **Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**

շրջադասություն, հանգավորում, չափազանցություն, փոխաբերություն, համեմատություն:

Գիշերն է փռել իր թևերը մութ,
Գիշերն է գերել իմ սիրտը ցաված.-
Որտե՞ղ որոնեմ երջանկության սուտ
Ու ինչպե՞ս գտնեմ վերադարձի լաց:

35 **Քանի՞ կետադրական սխալ կա հետևյալ նախադասության մեջ:**

Կարծում եմ, եթե ես այստեղ գայի հազար տարի առաջ, այս քարանձավները կլինեին կենդանի տներ, բակերը՝ աշխույժ երեխաների գոռում-գոչյունից զվարթ կզրնգային, թոնիրներից հացի ախորժակ գրգռող բույր կելներ և գետը նման չէր լինի երգեհոնի, որի՝ վաղուց սիրելի դարձած հնչյուններն այժմ հնչում են ոչ ոքի համար:

36 **Բառերից քանիսի՞ արմատին կարող է միանալ *-ակ* վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.**

բամբ, հարթ, մամուլ, աժդահա, կղզի, ազատագունդ, նախադուռ, վարս, ճարպագունդ, աղյուս:

37 **Բառերից քանիսո՞ւմ *ի* ձայնավորի հնչյունափոխություն կա.**

ընչաքաղց, ընդունակ, ընձուղտ, ընկնել, ընչացք, ընկեր:

38 **Տրված գոյականներից քանիսի՞ հոգնակին է սխալ կազմված.**

շիկահերներ, ռուսամոլեր, խոտհարքեր, պատճեներ, հացատներ, փայտահատներ, գեղագետներ, համհարզեր, նախրապաներ, վերջնագիրներ, վիպագիրներ, աղբարկղեր:

39 **Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հոմանիշ են:**

1. ձեռք բռնել – մատից փուշ հանել
2. գետն ամեն անգամ գերան չի բերի – պապն ամեն անգամ գաթա չի ուտի
3. համբերության բաժակը լցվել – դանակը ոսկորին հասնել
4. փորացավ ունենալ – անվանը մուր քսել

40 **Նշել այն բարդ նախադասությունների համարները, որոնցում ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն կա:**

1. Եվ այն հասկացա, որ դրամի պես մաշվել են արդեն բառերը բոլոր:
2. Եվ ինչ որ բերվում էր, վատնվում էր անմիջապես:
3. Կցանկանայի իմանալ, թե ինչն է ձեզ ինձ մոտ բերել:
4. Շատ վտանգավոր էր այն, որ ձիերը շարունակ սայթաքում էին:
5. Մեզ վախեցրեց այն, որ անձրևը սաստկացավ:

41 **Նշել այն բառերի և բառաձևերի համարները, որոնք գծիկով չեն գրվում.**

1. սոցիալ(տնտեսական), 2. դեփ(դեղին), 3. հնուց(ի)վեր, 4. տուն(տեղ), 5. վեր(լուծել), 6. ըստ(ամենայնի), 7. գիտա(մեթոդական), 8. հանձն(առնել), 9. անող(դնող):

42 **Նշել այն գրողների համարները, որոնք ստեղծագործել են խորհրդային տարիներին.**

1. Հ. Սահյան, 2. Մուրացան, 3. Ե. Չարենց, 4. Ա. Բակունց, 5. Մ. Մեծարենց, 6. Ավ. Իսահակյան, 7. Ալ. Շիրվանզադե, 8. Գ. Մահարի, 9. Ռաֆֆի:

43 **Նշել այն հատվածների համարները, որոնցում մեկից ավելի ածանցավոր բայ կա:**

1. Ու հանդարտ, մեղմաբար
   Հոտն իջներ սարից վար,
   Գրկեի ես մի գառ,
   Ու հոգիս մանկանար:
2. Աղբյուրն անուշ հեքիաթի պես
   Իր լույս երգով ժպտում էր մեզ.
   Դու մոտեցար մեղմ, համբաքայլ
   Որպես քնքուշ իրիկվա փայլ:
3. Լույսն էր մեռնում, օրը՝ մթնում,
   Մութը տնից տուն էր մտնում,
   Ես տեսա քեզ իմ ճամփի մոտ,
   Իմ մտերի՛մ, իմ անծանո՛թ:
4. Ինչ էլ որ ասեն,
   Հասկանում եմ լավ,
   Բայց պատասխանել
   Չեմ կարողանում…

44 **Նշել մակբայների համարները.**

1. երբևիցե, 2. բացի, 3. գոնե, 4. հոտնկայս, 5. վերջին, 6. հազիվ, 7. մոտակա, 8. դանդաղորեն, 9. ձեռաց:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Ցավալլուկ, սրտմաշուկ, բամբուկ, բանուկ*** բառերը վերջանում են ***ուկ*** վերջածանցով:
2. ***Օրենսդիր, ձերբազատ*** բառերում ածանց չկա:
3. Հայերենում վերջածանցներն ավելի շատ են, քան նախածանցները:
4. Ածանցը վերջավորությունից տարբերվում է նրանով, որ ածանցով նոր բառ է կազմվում, իսկ վերջավորությամբ՝ ոչ:
5. Հայերենում կան ***ու, ե, ո*** վերջածանցներ և ***ա, չ*** նախածանցներ:
6. Արմատները լինում են ինքնուրույն գործածություն ունեցող և ինքնուրույն գործածությունից զուրկ:

Բ մակարդակ

46 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա:**

1) գործու-ում, բու-այական, ու-ափառ, հե-են
2) օ-ան, տա-երք, ու-ակի, տա-ալուծել
3) ք-ախույզ, այ-ենարան, խճու-ի, բե-իություն
4) ու-ալար, հակըն-եմ, մ-կաշունչ, հո-երգություն

47 **Ո՞ր շարքում հատուկ անվան գրության սխալ կա:**

1) Հարուն ալ Ռաշիդ, Դը Լոնգ, Վան Գոգ, Աֆղանստանի Իսլամական Հանրապետություն
2) Աղթամար կղզի, Վանա լիճ, Մեծ Մասիս, «Հայկական Ժամանակ» օրաթերթ
3) Իրաքի Հանրապետություն, Իբն Սինա, Լա Պլաս, Հուլիոս Կեսար
4) Արևելյան Եվրոպա, Բոլնիս-Խաչեն, Լատինական Ամերիկա, Բաշ-Ապարան

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա:**

1) չքնաղակերտ, վրիժառու, սանրվածք, տտիպ
2) տվնջյան, տրամաբանել, քստմնելի, օրհնել
3) աննշմար, անընտել, մրրկող, կարծր
4) տվյալ, ճշտություն, գաղտնավանկ, կրկնապատկել

49 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Ականակիտ խավարի մեջ էին թաղվել շրջակա գյուղերը:
2) Աշակերտները պատրաստակամություն հայտնեցին շաբաթօրյակին մասնակցելու:
3) Արարատի բարձունքից մեր առջև հառնեց Արագածը՝ սպիտակափառ գագաթով:
4) Վանատուրը՝ իբրև աստված, խորհրդանշել է հայ մարդու ասպնջականությունը:

50 **Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:**

1) ***ճշդարենի*** – ծառի տեսակ, ***վիրապ*** – խոր փոս
2) ***օթոց*** – մի քանի մարդու համար նախատեսված բազմոց, ***հակամետ*** – հակված, տրամադիր
3) ***ճիգ*** – մետաղյա ամուր ձող, ***հովեկ*** – զեփյուռ, մեղմ քամի
4) ***պարույկ*** – հարցական նշան, ***լաջվարդ*** – ընտիր կապույտ ներկ

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են հոդակապով:**

1) բարձրատոհմ, բարձիթողի, բարյացակամ, բեռնանավ
2) բանակատեղ, բառապաշար, բարեբնույթ, բարձրանիստ
3) խճաքար, որմնադիր, բարեգութ, հնավանդ
4) բյուրասքանչ, բազկարձակ, որդեսեր, տնտեսագետ

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերջածանցավոր:**

1) տարեկան, բացատ, գյուղացի, նորագույն
2) հոտավետ, գործոն, գառնարած, խորոված
3) երկաթյա, ազդու, առու, ջլուտ
4) լավություն, փեսացու, դանակ, ձեռք

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են դերանուններ:**

1) համայն, իրենք, ինչ-ինչ, միմյանց
2) նման, որոշ, քանիերորդ, այստեղ
3) նույնքան, ինչքան, փոքր-ինչ, ոմն
4) մի քանի, ոչ ոք, ամենայն, մինչդեռ

54 **Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ *չկա:***

1) Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես՝ մնաս բարով:
2) Սի՛րտ իմ, ինչո՞ւ ես նորից խռովել,
   Իզուր ինձ ու քեզ ինչո՞ւ ես տանջում…
3) Բայց աչքերը մեր արևներ չտեսան,
   Եվ մեր սրտերը՝ լուսավոր հեռուներ:
4) Էլի գարուն կգա, կբացվի վարդը:

55 **Ո՞ր տարբերակում բաղադրյալ ժամանակաձև կա:**

1) Եթե հիվանդ ես դու, և տկար է ոգիդ,
   Եթե հոգնություն է քո երակներում,
   Այս երգս քեզ չի ամոքի...
2) Լավությո՛ւն արա ու ջո՛ւրը նետիր...
   Թաքուն մի՛ հուսա հատուցում ու վարձ:
3) Երկու ձիգ տարի նա այսպես պիտի
   Սան գա երգելով ու շուրջը դիտի...
4) Դու Ամենայն Հայոց Երգի Վեհափառն ես,
   Դու՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց,
   Գիրն ու տառն ես Հայոց երգի:

56 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ *չկա:***

1) Հորեղբայրս պատմում էր երկու արաբների՝ իմաստունի և հիմարի պատմությունը:
2) Այդ դեպքերից հետո ես երբեք չեմ մոռանա այն գարնան իրիկունը:
3) Եղան բռնություններ, թշնամին ձորերով բարձրացավ մինչև նրանց խեղճ խրճիթները:
4) Բոցը հասավ դեղնած արտերին, կրակը լափեց և՛ սերմ, և՛ սերմնացան:

57 **Ո՞ր նախադասությունն է անենթակա:**

1) Որի՞ն մոտենալ, որի՞ հետ ձուլվել առմիշտ:
2) Ծխելն արգելվում է:
3) Վարդի մուրաբան պատրաստում են թեյի վարդից:
4) Կռվով քաշվե՛լ աջակողմյան լեռնակիրճը:

58 **Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է. ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում:

1. տանող (ա. որոշիչ, բ. ձևի պարագա, գ. տեղի պարագա)
2. արահետն (ա. ենթակա, բ. ստորոգելի, գ. տեղի պարագա)
3. ոչ մի (ա. ենթակա, բ. որոշիչ, գ. չափի պարագա)
4. ոտք չի դնում (ա. պարզ ստորոգյալ, բ. բաղադրյալ ստորոգյալ, գ. զիջման պարագա)

1) 1-ա, 2-ա, 3-բ, 4-ա
2) 1-ա, 2-ա, 3-բ, 4-գ
3) 1-գ, 2-ա, 3-գ, 4-բ
4) 1-գ, 2-գ, 3-ա, 4-ա

59 **Ո՞ր նախադասության մեջ է պարագան արտահայտված գոյականով:**

1) Մինչև պատվիրակների ժամանելը ամեն ինչ պատրաստ էր:
2) Մենք ուզում ենք շուտ ծանոթանալ մեկմեկու նախասիրություններին, բնավորությանը:
3) Պատանի հասակում հեռացել էր տնից:
4) Պատարագն ավարտելուց հետո հայրենասիրական ճառ ասաց:

60 **Ո՞ր նախադասության մեջ ներգործող խնդիր կա:**

1) Դուք էլ խոսեցե՛ք, դուք էլ պատմեցե՛ք,
   Ձեր անդունդներով եկե՛ք չափվեցե՞ք...
2) Մարդու ողբերգությունը սկսվում է սեփական անզորությունը գիտակցելուց:
3) Ես ինձնից գոհ եմ, որովհետև ահա երեկվա գյուղացի՝ հիմա լրիվ ազատված եմ հովիվ դառնալու և հոդացավից նվալու վտանգից:
4) Գարնանային երկինքը պատված էր սև ու մռայլ ամպերով:

61 **Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Տղան կանգ է առնում և ընկերները նրա շուրջը շարվում են հոգնած զայրացած:
2) Այդ փողոցից կարելի է մտնել մեկ ուրիշ փողոց այնտեղից մի փոքրիկ նրբանցք որ նման է մրջնանոցի:
3) Միանգամայն սթափ վիճակում էի բայց այդ վայրերում ծնված ու մեծացած որսորդս չգիտես ինչու առանց պատճառի սկսեցի երեխայի պես հեկեկալ թպրտացող սրտիս համակած տարօրինակ ճնշումից:
4) Սիմոնը հետ նայեց Արշակ քեռին ջրի մյուս կողմն էր կռացած փնտրում էր անցնելու տեղ առվի վրա:

62 **Ո՞ր պնդումն է սխալ:**

1) Ե. Չարենցը նորագույն շրջանի հայ գրականության սկզբնավորողն է:
2) Նորավեպը փոքրածավալ արձակ ստեղծագործություն է, որտեղ գործողությունները զարգանում են արագ ու սրընթաց: Այն ունենում է կտրուկ ու անսպասելի ավարտ:
3) Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը գրվել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին:
4) Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» շարքը նվիրված է միջնադարյան հայ մատենագիրներին:

63 **Նշված հատկանիշները բանաստեղծական ո՞ր տեսակին են բնորոշ:**

Ութտողանի բանաստեղծություն է, որի առաջին տողը նույնությամբ կրկնվում է որպես չորրորդ և յոթերորդ տող, իսկ երկրորդ տողը՝ որպես ութերորդ:

1) գազել
2) տրիոլետ
3) հայրեն
4) սոնետ

64 **Տրվածներից քանի՞սն են ճիշտ Ավ. Իսահակյանի ստեղծագործությունների վերաբերյալ:**

- «Սև-մութ ամպեր» բանաստեղծության մեջ հեղինակը զրուցում է Ալագյազի հետ՝ համոզված պնդելով, որ իր դարդի պես դարդ ոչ մեկը չունի, և հավքերն ու հովերն անգամ չեն դիմանա դրան:
- «Հայրենի հողը» ստեղծագործության մեջ հերթական ճակատամարտում մատնությամբ թշնամուց պարտված քաջ զորականը հեռանում է սեփական երկրից:
- «Օտար, ամայի ճամփեքի վրա» բանաստեղծության մեջ հեղինակը պնդում է, որ կինը շուտ է մոռանում արցունքներ, և ինքը չի հավատում նրա համբույրին:
- Ավետիք Իսահակյանը աշխարհաթողության թեմային անդրադարձել է միայն «Աբու-Լալա Մահարի» պոեմում:

65 **Բառերից և բառաձևերից քանիսի՞ բոլոր վանկերն են փակ.**

խնդիրներ, հստակեցվել, ստեղծել, անձնական, պայմաններ, կազմակերպել, աշխատեցնել, փաստաթուղթ, երկրակեղև, երկրորդ, կողմնորոշվել, մշակույթ:

66 **Քանի՞ գոյական կա տրված հատվածում:**

Ե՛վ հայոց մեր շարժուձևը, որն այնքան բան է ասում, և՛ ծնկներին խփելն ու պայթուն ծիծաղը, և՛ հայերեն բառը, նայվածքը, ժպիտը զարմանալի այս ցեղի զորավոր հառնումն են ցուցադրում:

67 **Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք ճիշտ են փոխակերպված բարդի:**

1. *Ես միանգամայն հավատում էի նրա մեղավոր լինելուն:*
   Ես միանգամայն հավատում էի, որ նա մեղավոր է:
2. *Տղայի համար կարևորը անձնազոհություն ցույց տալն է:*
   Տղայի համար կարևորն այն է, որ անձնազոհություն ցույց տա:
3. *Երեխան անհամբեր սպասում էր մորը՝ իրեն կերակրելուն:*
   Երեխան անհամբեր սպասում էր մորը, որ իրեն կկերակրի:
4. *Մտածում եմ նրանից ինչպես հեռանալուս մասին:*
   Մտածում եմ այն մասին, թե ինչպես հեռանամ նրանից:

68 **Նշել այն բառերի համարները, որոնք ընդհանուր արմատ ունեն.**

1. առապար, 2. խմբապար, 3. մենապար, 4. պարահանդես, 5. զուգապար:

69 **Դասավորել համարները այն հերթականությամբ, որը համապատասխանում է նախադասությունների տրամաբանական հաջորդականությանը:**

1. Եգիպտացիները պատկանում են այն ժողովուրդների թվին, որոնք՝ որպես ինքնուրույն ժողովուրդ, պատմության թատերաբեմից դարեր առաջ են հեռացել, բայց սերունդներին հավերժական հուշարձաններ են թողել:
2. Եգիպտական բոլոր հուշարձաններն էլ աչքի են ընկնում իրենց գեղեցկությամբ ու ապշեցուցիչ վեհությամբ, սակայն դրանց մեջ առանձնակի տեղ են գրավում բուրգերը, իսկ բուրգերի շարքում՝ Քեոփսի հիանալի բուրգը:
3. Իսկապես, եգիպտական ոչ մի հրաշալիք մարդկային անհագուրդ երևակայությանը այնքան սնունդ չի տալիս, որքան առեղծվածային բուրգերը, որոնք աշխարհի բոլոր ծայրերից մարդկանց քաշում են դեպի Եգիպտոս:
4. Այդ հուշարձանները աներկբայորեն հաստատում են, որ, հիրավի, փրփրահոս Նեղոսի կանաչազարդ հովիտը իր ժամանակին եղել է մարդկության քաղաքակրթության օրրաններից մեկը:

70

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. ***Ա*** ներքին հոլովման ենթարկվող բոլոր բառերի գործիականը կարող է կազմվել և՛ ***ով,*** և՛ ***ը*** վերջավորություններով:
2. ***Յ*** հոլովման ենթարկվում են միայն ***անք, ենք, ոնք*** ածանցներով հավաքական գոյականները:
3. ***Ոջ*** հոլովման պատկանող բոլոր բառերը չունեն ներգոյական հոլով:
4. ***Ան*** հոլովման ենթարկվող բառերից մի քանիսը կարող են հոլովվել նաև ***վա*** հոլովմամբ:
5. Գրաբարյան ***ն*** վերջնահնչյուն ունեցող բոլոր այն միավանկ բառերը, որոնք հոգնակին կազմում են ***ներ*** վերջավորությամբ, ենթարկվում են ***ան*** արտաքին հոլովման:
6. ***Ու*** հոլովման է ենթարկվում բոլոր բայերի անորոշ դերբայը: